ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 23 դեկտեմբերի 2022թ.

2022 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքի տարածքը օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Էդիկ Պիճիկյանը, անդամներ Արմեն Հայրապետյանը, Աշխեն Մարուքյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին»,***
2. ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքի տարածքը օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին»***

որոշումների նախագծերի թեմաներով:

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ օրակարգի առաջին հարցը՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին»*** ավագանու

որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման ծրագիրը, 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով: Որոշման նախագծի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 421 117,7 հազար դրամ, դեֆիցիտը (պակասուրդը) ՝ 0 դրամ:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 2	Ձեռնպահ-1	Դեմ- 0
Էդիկ Պիճիկյան	Աշխեն Մարուքյան	
Արմեն Հայրապետյան		

Լ. Պողոսյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքի տարածքը օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին»*** որոշման նախագիծը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի (***Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ 21) համայնքի ղեկավարի***

առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին (ներառյալ՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրով նախատեսված դեպքերում, բացառությամբ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի), որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը.), հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է թույլատրել «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան տարածքը (դահլիճը և սենյակները) Բյուրեղավան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափերին համապատասխան վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել՝ Մշակույթի տանը կրթական, դաստիարակչական և ժամանցային գործունեություն իրականացնելու նպատակով:

Որոշվեց՝

հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան շենքի տարածքը օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին»* որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ – 3

Էդիկ Պիճիկյան

Արմեն Հայրապետյան

Աշխեն Մարուքյան

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Էդիկ Պիճիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արմեն Հայրապետյան